№ 264 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 1901 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 № 264

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներկայումս եւ ապագայում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չը կան մեզանում տաղանդներ. Ռուսաց ներկայացումները. Վանական տնտեսութիւն. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԵՒ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Արդեօք լաւ հետեւանք կունենայ, եթէ նաւթի վրա դրված դրամական հարկը վերացվի եւ նրա փոխարէն վերցվի արդիւնաբերված նաւթի մի որոշ մասը՝ 1/3, 1/4, 1/5 եւ այլն։

Ներկայի համար այդ փոփոխութիւնը կարող է բարերար լինել, որովհետեւ նա գործնականապէս միջոց կը տայ փակված հանքերը գործի դնել, դադարեցրած հորերը նորից բանեցնել եւ շարունակել նաւթագործութիւնը։ Իբրեւ մի միջոց, որ ներկայ դժուարութիւնները կարող է վերացնել եւ քայքայվող տնտեսութիւնները պահպանել եւ վերակազդուրել, նա դարձել է փրկութեան մի հնար, որին դիմում են այն նաւթագործները, որոնք պարտաւոր են կառավարութեան տալ մեծ հարկեր, պատճառելով իրանց մեծ վնասներ։

Բայց ապագայում նաւթամասի վճարումը կը դառնայ մի շատ վտանգաւոր ձեռնարկութիւն նաւթագործների համար։ Եւ ահա ինչու։ Ենթադրենք, որ պետական հողերից տարեկան ստացվում է Բագուի շրջանում 300 միլիոն պուդ նաւթ եւ որ այդ քանակութեան միայն երրորդ մասը վերցնում է կառավարութիւնը, այն ժամանակ կառավարութեան ձեռքին կը լինի 100 միլիոն պուդ նաւթ ապրանք եւ նա կը դառնայ ամենախոշոր նաւթագործներից մէկը։ Եթէ նոյն եղանակով նա վերցնէ Գրօզնիում եւ ուրիշ տեղերում գտնվող նաւթը, այն ժամանակ կառավարութիւնը կը դառնայ մի այնպիսի նաւթագործ, որ կը ճնշէ բոլոր միւս նաւթագործներին։ Կառավարութեան համար շատ հեշտ կը լինի ծախել իր նաւթը, պայմաններ կապել խոշոր գործարանատէրերի եւ առեւտրական տների հետ, նա մեծ դիւրութիւններ կունենայ տեղափոխելու իր նաւթը թէ շոգենաւերով եւ թէ երկաթուղիներով. մինչդեռ միւս ձեռնարկողները կարող կը լինեն դիւրութիւններ ձեռք բերել, երբ կառավարութեան պաշարները արդէն տեղաւորված եւ վաճառահանված կը լինեն։

Այդտեղից յետոյ մի քայլ կը մնայ դէպի պետական մենավաճառութիւնը, որ նա կը մտցնէ նաւթային արդիւնագործութեան մէջ եւ որով նա դէն կը շպրտէ միւս նաւթագործներին, որոնք այժմ օգտվում են այդ արդիւնագործութիւնից եւ մեծ գումարներ են ծախսել նրա վրա։ Մեզ կարող են առարկել, որ պետութիւնը, իր ձեռքն առնելով ամբողջ արդիւնագործութիւնը, կը շահեցնէ նրան ընդհանուր պետութեան օգտին։ Այդ ճիշտ է։ Բայց պետական միջամտութիւնը արդիւնագործութեան մէջ ամեն անգամ բարերար հետեւանքներ չէ ունեցել եւ շատ անգամ կաշկանդել է նրա զարգացումը։

Ուստի նպատակայարմար կը լիներ, եթէ նաւթագործները կարողանային կառավարութիւնից որոշ արտօնութիւններ ձեռք բերել միայն ներկայ ճգնաժամի համար, իսկ նաւթային հարկատուութեան սիստեմի փոփոխութեան ծրագիրը աւելի կատարեալ եւ բաղմակողմանի կերպով մշակէին, քան մինչեւ այժմ արված է։ Կառավարութիւնը պէտք է օգնութեան գայ մեր նաւթագործներին եւ իր կողմից աշխատէ դիւրութիւններ տալ նաւթագործներին, որոնք պետական հարկի վճարման պատճառով քանդվում փչանում են, ոչ միայն կորցնելով այն գումարը, որ նրանք տալիս են կառավարութեան, այլ իրանց խնայողութիւնները եւ հաւատութիւնները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԸ ԿԱՆ ՄԵԶԱՆՈՒՄ ՏԱՂԱՆԴՆԵՐ

Մթթէ չը կան մեզանում տաղանդներ։

Ի հարկէ, կան, մենք միայն չենք տեսնում, չենք նկատում, չենք ընդունում հայ տաղանդներ։

Մենք պարծենում ենք Այվազովսկիով։

Բայց արդեօք չմտա՞ բան ենք անում, որ մեզանում անպակաս լինեն Այվազովսկիները։

Հաստատեա՞ ոչինչ։

Այսօր խօսքս մի հայ տաղանդի մասին է։

Մեզանից է կախված, որ այդ տաղանդը մեծանայ, զօրեղանայ, զարգանայ եւ մեր պարծանքը դառնայ։

Ես խօսում եմ Անդրէաս Տէր-Մարուքեանի մասին։

Անդրէաս Տէր-Մարուքեան մի չնորհալի, տաղանդաւոր աշակերտ-քանդակագործ է։

Նա տուել է մեզ իր Գամառ-Քաթիպան։ Հասկացողները, տեսնելով Գամառ-Քաթիպայի արձանը, միաձայն կարծում են, որ Տէր-Մարուքեան մեծ ապագայ ունի իր առաջ։

Գուցէ նրա մէջ քնած է եւ պիտի զարթնէ մի մեծ հայ հանճար, որով մենք կարողանանք պարծենալ ժամանակով։

Բայց Տէր-Մարուքեանին պէտք է գնալ արտասահման եւ կատարելագործվել։ Կատարելագործվելու համար նրան պէտք է «անիծեալ փարան»։

Ո՞ր տաղանդը ունեցել է փարա։

Զունի եւ Տէր-Մարուքեան։

Սրանով դիմում ենք մենք մեր հայ հարուստներին։ Մենք ծեծում ենք նրանց դռները եւ խնդրում ենք լինել հիւրընկալ։ Այդ հիւրը հայ տաղանդն է, Տէր-Մարուքեանը։ Օգնեցէք նրան գոնէ մի տարի շարունակել ուսումը Գարիզում։ Տուէք ձեր փողը փոխարինաբար, դուք լաւ բանի տուած կը լինէք։ Գարոնը ընակվում է Երեւան այժմ եւ սպասում է մեր օգնութեան։

Մենք ծեծում ենք մեր հարուստների դռները եւ սպասում ենք, ով արդեօք կը բանայ եւ կը լսէ մեր խօսքերը։

Գուցէ ի զուր է մեր խօսածը, գրածը, աշխատածը։

Մենք գրում ենք, որ վերջը ոչ ոք չասէ, թէ մենք չը գիտէինք եւ եթէ իմանայինք, կօգնէինք։

Մենք շատ հայ տաղանդներ թողել ենք։ Կը թողնենք եւ Տէր-Մարուքեանին։

Բայց ոչ ոք թող չասէ, թէ մեզանում չը կան տաղանդներ։

Տաղանդներ կան, բայց հայի աչքերը կոյր են հայ տաղանդը տեսնելու եւ ճանաչելու։

Գր. Զալխուշեան

ՌՈՒՍԱՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Երկուշաբթի, նոյեմբերի 26-ին, ռուսաց դրամատիքական խումբը մասնակցութեամբ Ադէլհայմ եղբայրների ներկայացրեց Շիլլերի «Աւազակները»։

Ներկայացումը, որ գրուել էր մեծ բաղմութիւն, շատ լաւ անցաւ։ Ադէլհայմ եղբայրներից Բաֆայէլը կատարում էր Ֆրանցի, իսկ Օքտէրաը Կարլ Մօրի դերը։ Շիլլերը Ֆրանցի եւ Կարլի ընտանութիւնների հակադրութիւնը այս կարճ խժատուն է որոշում. առաջինը «խորհրդածող մի չար ոգի է», իսկ երկրորդը «մի մարմնացած գործողութիւն, մի իսկական կեանք»։ Ֆրանցը առանց իր սրտի դռները բաղխելու, խելքի, ատն բանականութեան՝ այժմով է միայն գործում։ Նա հիւսում է թակարդների մի սոսկալի ցանց եւ հրէշային ինքնաբաւականութեամբ նորանոր ոճրագործութիւնների ծարաւովն է միայն պապակում։ Կարլն, անկասկած, բնաւորութեամբ աւելի ազնիւ է. նա կրակոտ է, կրքի բռնէներին անզուսպ, բայց միանգամայն հեռու է իր եղբօր չարամիտ նենգութիւնից։ Միւս կողմից նա այս վերջինի նման մեղկ եւ թուլասիրտ չէ, կամքով ուժեղ եւ գործունեայ։ Նա ոգեւորվում է հռոմէական այնպիսի զօրեղ բնաւորութիւններով, ինչպէս են՝ Կեսար կամ Բրուտոսը։

Գ. Բաֆայէլ Ադէլհայմի խաղը սկզբում աստիճանաւորիչ չէր, բայց երրորդ գործողութիւնից սկսած նա աւելի ու աւելի զօրեղ էր դառնում։ Իսկ վերջին գործողութեան մէջ նա արդէն իր դերի լիակատար տէրն էր եւ իր փայլուն խաղով միանգամայն յափշտակեց ունկընդիրներին։ Գարոնը շատ ինտելիգէնտ տպաւորութիւն է թողնում, հետեւաբար, պարզ է, որ իր խաղը հիմնովին մտածված եւ ներքուստ իւրացված էր։ Գարոնի գլխաւոր առաւելութիւնն այն է, որ նա, իբրեւ լուրջ, հասկացող դերասան, իրան միանգամայն հեռու է պահում չափազանցութիւնից եւ արտաքին միջոցներով տպաւորութիւն թողնելու հակումից. սա շօշափելի կերպով երեւաց հէնց իր գրիմից, որ հրէշային, այլանդակ տգեղութեան ոչ մի հետք չէր կրում։

Գ. Օքտէրաը Ադէլհայմի Կարլը նոյնպէս մի փայլուն երեւոյթ էր։ Նրա խաղը սկզբից մինչեւ վերջ աջողութեան եւ յաջթանակի ընթացքից չը շեղվեց, թէեւ աստիճանական տարբերութիւններն, ի հարկէ, անխուսափելի էին։ Նա էլ իր եղբօր նման ինտելիգէնտ տպաւորութիւն է թողնում, խելօք է, բայց աւելի կրակոտ եւ ըստ երեւոյթին՝ նուազ չափաւոր։ Այս վերջին երկու յատկութիւնները մենք առ այժմ վերապահութեամբ ենք միայն մատնանիշ անում, որովհետեւ առաջին անգամն ենք տեսնում պարոնի խաղը եւ բացի դրանից այդ յատկութիւնների արժէքը մասամբ դերի մէջ պէտք է փնտռել։ Միմիկայի հարաբերութեամբ նա մրցում է իր եղբօր հետ, բայց այս վերջինին գերազանցում է իր աքանչելի ձայնով։

Միւս դերակատարներից ամենաաջողը պ. Գեսիպայի Հերմանն էր։ Գ. Սօկոլսկու Շպիգելբերգ նոյնպէս լաւ էր եւ տեղ տեղ շատ կենդանի։ Տիկին Եվդէնեվայի Ամալիան կարելի է բաւարար համարել. այն ինչ պ. Եակովլէվի Մաքսիմիլիան ֆօն Մօրը սկզբում թոյլ էր եւ վերջը միայն գոհացուցիչ։

Ադէլհայմ եղբայրները որոտալից ծափահարութիւնների արժանացան։

Վ. Նալբանդեան

ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

(Նամակ Էջմիածնից)

Հետաքրքրական է, կարծում ենք, մի ակնարկ գցել դրամական այն ճգնաժամի վրա, որին մատնված է ամենայն հայոց Մայր Աթոռը։ Շատ անգամ ենք գրել այս հարցի մասին, շատ անգամ ենք ներկայացրել փաստեր Էջմիածնի մէջ կատարված եւ կատարվող իրողութիւններից, սակայն միշտ նոյնը, դեռ եւս աւելի վատ, քան առաջ։

Մեզ ասում են. «Ի զուր եւ անօգուտ է վանքի մասին գրելը, որովհետեւ վանքի ոչ վատն է անհիմն եւ անցողական եւ ոչ էլ լաւը —հիմնաւոր եւ երկարակեաց»։ Այո՛, վանքի այժմեան վարիչների վերաբերմամբ մենք ընդունում ենք այդ, սակայն ամբողջ հայ ազգի եւ բազմաթիւ ընթերցողների համար ոչ թէ ի զուր չէ, այլ եւ շատ կարեւոր ու օգտակար։ Մեր նպատակն է միայն ծանօթացնել ընթերցողներին Էջմիածնի թէ վատ եւ թէ լաւ դէպքերի հետ, իսկ թէ վանքն էլ, գուցէ, իր նպատակն ունի՝ պաշտպանելու վատը ու ճնշակարը եւ հալածելու լաւն ու օգտակարը, այդ էլ, որպէս եղբակցութիւն, անթիւ փաստերի հետ միասին թողնում ենք ընթերցողներին պարզելու։

Դրամական ճգնաժամ է վանական կառավարութեան դրամարկղում։ Սակայն երբ չէ եղել վանքում այդ անիրաւ ճգնաժամը։ Ի հարկէ միշտ, բայց այժմ աւելի եւս սաստիկ եւ զգալի... Սարսափը տիրել է վանական կառավարութեան անդամներին եւ չը գիտեն ինչպէս եւ ինչ միջոցներով բաւականութիւն տան եւ վեհարանի ծախքին, եւ ճեմարանի տեսչի պահանջներին, եւ տպարանի վարչութեան կազմած նախահաշիւին եւ միաբանութեան կարիքներին։

Վեհարանի պահանջը յանկարծակի է լինում, բոլշեւիկի պահանջվում է դրամ կամ ծախս, բոլշեւիկի էլ պէտք է կատարվի, կատարվի եւ այն ժամանակ, երբ Վեհափառը ամիսներով բացակայում է Էջմիածնից։ Ի՞նչ անենք, որ դրամարկղը դատարկ է, պէտք է պարտք անել, մի կերպ ճարել եւ բաւականութիւն տալ վեհարանին, որ հաջի Սիմոնիկների խաթրը չը մնայ, եթէ ոչ Թիւրականից էլ իրանց ազդեցութիւնը ցոյց կը տան...

Հեշտ բան չէ նաեւ ճեմարանի հայր տեսչի պահանջների չը կատարելը. փորձեցէք կրճատել ճեմարանի անգործ քարտուղարի տարեկան 600 ր. ռոճիկը, փորձեցէք նկատել, որ ճեմարանի քարտուղարը իրաւունք չունի ամենայն երեկոյ ճեմարանի ծառայով եւ լապտերով իր բնակարանը գնալու, փորձեցէք բողոքել, որ հազարներ ռոճիկ ստացող ուսուցիչները իրաւունք չունեն ճեմարանում նախաճաշել ձրիաբար, փորձեցէք չը վճարել ճեմարանի 800 բուբլի տարեկան ռոճիկ ստացող վերակացուներին լուսցքի եւ օթայի գինը, թէյի ու շաքարի արժէքը եւ այլն... այն եւս այն վերակացուների, որոնք անցեալ տարի միայն վերկենալով ճեմարանի աշակերտական նստարանից, դարձել են այժմ ամենանուրբ խատապահանջներ, փորձեցէք—եւ հայր տեսուչը իսկոյն իր հրաժարականով լռեցնել եւ հաստատեցնել կը տայ վանական կառավարութեան բոլոր անդամներին։

Դժուար է չը հաստատել նոյնպէս տպարանի վարչութեան կազմած ծախսի նոր նախահաշիւը, չէ որ տասնեակ հազար ծախսի դէմ նոյն քան էլ դրամական աշխատանք է խոստանում, ինչ անենք, որ նրա բաղդի անիւը թարս է գլորվում եւ ամենաօգտակար ձեռնարկութիւնների մէջ անգամ վնաս է կրում... Ո՛չ, պէտք է կատարել այս բոլոր պահանջները։ Բայց որտեղից, որանք էլ հօ գոմանցի մշակները չեն, որ մի երկու մանէթով կարողանան բաւականանալ, եթէ չեն ուզում, որ իրանց երկու թուանքչիներով քշեն եւ անասունների պէս գոմանցը անեն ու պահանջեն, որ սպասեն եւ շարունակեն առանց ամսականի աշխատելը...

Էլ չենք խօսում միաբանների ռոճկի մասին, որանք մոռացել են մինչեւ անգամ թէ որ ամսականն են ստացել եւ որն է մնացել։ Ինքնամասած, ռոճիկի կողմից միաբանները ամենահամբերողն են եւ չը համբերելու էլ ոչ մի պատճառ չը կայ, քանի որ բնակվելու սենեակներ ունեն, այն էլ փառաւոր կահաւորած, ճաշ եւ ընթրիք պարտատ կայ, իսկ թիսած հաց—որքան ուզես, մնում է միայն հագնելիք, թէյ, շաքար եւ միրգ, բայց այս կողմից էլ նեղութիւն չեն կրում չնորհիւ Վաղարշապատի եւ Երեւանի վաճառականների, որոնց մոտ միշտ անհաշիւ կրեդիտ ունեն ապրանք վերցնելու. եւ ինչու՞ կրեդիտ չունենան, քանի որ գնի մէջ մեր միաբանները խօսացող չեն, իսկ վճարելու ժամանակ միշտ մանէթներով են վճարում, հրաժարվելով աւելացած կոպէկները յետ ստանալուց եւ իրանց գրպանը դնելուց։

Վեհափառը, երեւի, գուշակելով դրամական ճգնաժամի սատականալը եւ կամենալով մի ելք գտնել վանական կառավարութեան անդամներին այս դրութիւնից ազատելու, այս տարվայ սկզբից անդամների թիւը աւելացրեց երեք նոր անդամներով՝ մէկը միաբաններից, իսկ երկուսը ճեմարանի եւ տպարանի վար-

չութիւնների առատուածքան անդամներից։ Եւ այսպէս, վանական կառավարութիւնը կազմակերպում է վանական վարչութիւնների ներկայացուցիչներից, որոնց մասնակցութիւնը, մեր կարծիքով, այն նպատակով է, որ այս նոր անդամները նախկիններին եւ գանձապահ-անդամի հետ միասին կամ եօլայ կը տանեն վանական գործերն ու ծախքերը եւ կամ, տեսնելով վանքի դրամական նեղ ճգնաժամը, գոնէ նորանոր եւ տարաբաժանող պահանջներ չեն յայտնի ճեմարանի եւ տպարանի վերաբերմամբ, որպէս յայտնել են մինչեւ այժմ։ Սակայն այս փորձն էլ անօգուտ անցաւ, դրամի պահանջ այժմ աւելի եւս չատ է զգացվում, իսկ դրամարկղը աւելի չուտ չուտ սկսեց դատարկվել, եւ այժմ վանական կառավարութեան դրամարկղի դրութիւնը չատ նման է Կրիլովի «Կարապը, ձուկը եւ խաչափարը» առակին, որի մէջ այս երեք անհաւասար եւ անմիաբան կենդանիները միանգամից լծվելով միասին մի բարձած սայլի, թէեւ ամեն ջանք գործ են դնում բեռը տեղ հասցնելու, բայց անկարելի է լինում նոյն իսկ շարժել, որովհետեւ կարապը դէպի վեր է քաշում, ձուկը դէպի ջուր, իսկ խաչափարը յետ ու յետ է գնում։

Այս սայլի օրին է հասել եւ վանական կառավարութեան դրամարկղի վիճակը.—Ներսիսեանի եպիսկոպոսը դէպի վեհարան է ձգում, ճեմարանի տեսուչ կարապետ վարդապետը—դէպի ճեմարան, տպարանի անդամ Եղիշէ վարդապետը—դէպի տպարան, գանձապահ Եղիշէ վարդապետը—դէպի գանձարան, իսկ Համազասպ վարդապետը—դէպի վանական կառավարութեան դրամարկղը, հաւատացնելով, որ դրամարկղում դրամ չէ մնացել եւ խնդրելով, որ գոնէ ընակալ թողնեն եւ դրամարկղը իսպառ չը դատարկեն... Զանազանութիւնը իսկական առակի եւ մեր հանգամանութեան մէջ այն է միայն, որ Կրիլովի բարձած սայլը մնացել է մինչեւ այսօր էլ իր տեղումն անշարժ, իսկ վանական կառավարութեան անդամները վճռել են իրանց սայլը անպատճառ տեղից շարժել, որի համար օգնութեան են կանչել եւ մի աշխարհականի։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Նոյեմբերի 17-ին

Ամսոս 15-ին հայ դրամատիկ խմբի անդամներ—օր. Վարդուհի, տ. Մելիքեան, պ. Արաքսեան եւ Յարութիւնեան տեղական տիրոջների մասնակցութեամբ խաղացին Սունդուկեանի «Խաթաբալա» կոմեդիան։ Թատրոնը լիքն էր հասարակութեամբ, որ մի անգամ էլ ապացուցեց, թէ դեռ չէ սառել հայ բեմից, մանաւանդ, երբ տրվում են այնպիսի պիեսներ, որոնց մէջ անդրադառնում են իր տեսական կեանքի բնորոշ յատկութիւնները, գծերը։

Ներկայացումը այնքան աջող անցաւ, որ չենք կարող ասել, թէ նրանցից ով աւելի լաւ ներկայացրեց վերցրած տիպը. դերերը բաժանված էին այժերի համեմատ։ Սիրողներից միայն պ. Զալալեանն էր, որ բոլորովին փչացրեց իր դերը։

Հրաւիրում ենք հասարակութեան եւ մանաւանդ հայ դերասանական խմբի ուշադրութիւնը երիտասարդ ակնակ պ. Արիստակեանի վրա, որ անպայման շնորհալի տիրող է, ձիրք ունի եւ կարող է պատուաւոր տեղ բռնել հայ բեմի վրա, եթէ իր փորձված պաշտօնակիցները չեն ղանայ աջակցել նրան եւ մշակել պարոնի ունեցած առաւելութիւնները, որոնց մէջ հայ բեմը անպայման կարիք ունի։ Պէտք է խրախուսել երիտասարդին եւ այդ ամենից առաջ պարտաւոր են անել իրանք—դերասանները։

Ներկայացումը վերջացաւ շատ ուշ—կէս գիշերն անց։ Զուտ արդիւնք մնաց 360 ր.։ Հասարակութիւնը հեռացաւ թատրոնից գոհ սրտով եւ, սակայն, մնաց տարակուսանքի մէջ ու չը կարողացաւ պարզել իրան մի հարց—թէ՝ ինչպէս է պատահել, որ այսպիսի կարեւոր այժերը մնացել են Թիֆլիսի խմբից դուրս։ Այդ էլ, երեւի, իրանց դերասանների գաղտնիքն է, որին ձեռնամուխ լինելը գուցէ եւ անհամեստութիւն լինէր մեր կողմից։

Գ. Արաքսեան, ինչպէս լսում ենք, մտադիր է մօտիկ ապագայում կազմակերպել մի խումբ ազատ մնացած դերասաններից, դերասանուհիներից եւ տեղական տիրոջներից ժողովրդական էժանագին ներկայացումներ տալու համար ցիրկի շինութեան մէջ, չաբաթը մէկ կամ երկու անգամ։ Եթէ չենք սխալվում, նա արդէն բանակցութեան մէջ է ցիրկի վարչութեան հետ շինութիւնը վարձելու։ Երեւան գնալը երեւի թէ կը թողնի։

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ առաջիկայ մարտ ամսին, սեզօնը վերջանալուց յետոյ, մեր հայ բեմի վեստրան, տ. Հրաչեան պատրաստվում է կատարել մի արտաքիքական պտոյտ Կովկասում եւ Կովկասից դուրս։

Սկաք.

ՆԱՄԱԿ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Եկատերինոդար, Նոյեմբերի 3-ին

«Մշակի» № 224-ի ներքին լուրերի բաժնում հաղորդված է «Новое Обозрѣніе»-ից վերցրած լուրը, որ իբր թէ Մոսկվայի հայուհիները մտադիր են հայերէն «Գրական ժողովածու» հրատարակել, բացառապէս հայ կանանց աշխատակցութեամբ։ Բայց որովհետեւ դեռ այս տարվայ սկզբին այդ մտադրութիւնը ձեռնարկել եւ գործը սկսել ենք մենք, ուստի ցանկալի է որոշ բան իմանալ Մոսկվայի հայուհիներից, որոնցից մի քանիսը հաճաձայնութիւն են յայտնել մասնակցել մեր ժողովածուին (տես «Մշակ» № 45)։ Եթէ նրանք իսկապէս մտադիր են եւ ուզում են հրատարակել այդ ժողովածուն, այն ժամանակ թող գրեն մեզ կամ յայտնեն իրանց հասցէն, որպէս զի պայմանաւորվենք, քանի որ այդպիսի ձեռնարկութիւններով զբաղվելը կարող է մնասել թէ մեր ձեռնարկութեան եւ թէ նրանց։ Մենք դիմել ենք մօտ 40 հայուհիների մասնաւոր նամակներով, բայց չատ չատերի հասցէն չը գիտէինք, այնպէս որ կային յայտնի կին գրողներ, որոնց չը կարողացանք դիմել, հասցէները չունենալով։ Առիթից օգտվելով, նորից խնդրում ենք պատուարժան հայուհիներին, որոնք խոստացել են մասնակցել եւ նրանց, որոնք չը գիտէին, շտապեն ուղարկել իրանց աշխատութիւնները, որ հնարաւորութիւն ունենանք օր առաջ ժողովածուն հրատարակել, քանի որ դեռ ցենզուրային պէտք է ներկայացնենք գրքուածքները։

Ժողովածուն լինելու է գրական-բանասիրական, ինքնուրոյն եւ թարգմանական գրուածքներից կազմված։ Գայացած կուտ արդիւնքի կէսը յատկացվում է Զանչենի յիշատակին։

Թիֆլիսից մեզ դիմել են եւ հարցնում են՝ արդեօք ճիշդ է, որ մենք թողել ենք մեր մտադրութիւնը. որանով հերքում ենք տարածված լուրերը եւ կրկին խնդրում, որ շուտով հաղորդեն մեզ իրանց աշխատութիւնները։ Ամեն ինչ կախված է հայուհիներից։ Սպասում ենք աշխատութիւնների։ Արդէն ստացել ենք մի քանի աշխատութիւններ եւ յայտնում ենք մեր շնորհակալութիւնները։ Այն գրուածքները, որ անհնար կը լինի տպագրել, կը վերադարձնվեն տէրերին։ Մեր հասցէն՝ Кіевъ—Университетъ—студенту юристу Г-С. Джанумову կամ Москва. Покровка. Колничный, Бр. Джанумовы для студ. Джанумова и Сатунянца.

Հրատարակիչների կողմից՝

Նիկ. Սաթունեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Թիֆլիսի յունադաւան հոգեւորականութիւնը որոշել է գաւազան մատուցանել Վրաստանի էկզարխ Ցլամիան արքեպիսկոպոսին, որ մօտ օրերումս կը մեկնի Թիֆլիսից դէպի Խարկով։

—

Քութայիսի տարրական գիւղատնտեսական դպրոցում մտցրած է հաւատահութեան դասատուութիւն։ Այս առարկայի դասատուութեան որոշումը բացատրվում է այն հանգամանքով, որ վերջին տարիների ընթացքում հաւատահութիւնը եւ ձուի արատհանումը Քութայիսի նահանգում գիւղատնտեսութեան խոշոր ճիւղերից մէկն է դարձել։

—

Մենք տեղեկանում ենք լրագիրներից, որ մտադրութիւն կայ արքունական հողերից առանձին հողաբաժիններ տալ մասնաւոր անձերին ամարանոցներ շինելու համար։ Հողաբաժինները կը տրվեն երկարամեայ կապալի պայմանով եւ բաղկացած կը լինեն ամենաչատը 1/4 դեսեատինից։

—

Միջնակարգ դպրոցներում օրէնագիտութեան դասատուութիւնը մտցնելու հետ միասին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ հարց է յարուցված՝ թոյլատրել մեր հասարանների իրաւաբանական ֆակուլտէտներն աւարտած անձանց դասախօսել միջնակարգ դպրոցներում թէ ընդհանուր պատմութիւն եւ թէ հայրենագիտութիւն։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, թէ Պետերբուրգի հնագիտական ինստիտուտը ձեռնամուխ է եղել հրատարակելու Կորանի ամենահին ձեռագիրը, որ, ըստ աւանդութեան, պատկանելիս է եղել Օսմանին։ Երկար ժամանակ այդ ձեռագիրը պահվում էր Սամարկանդում, որտեղից եւ առնված է նա, իբրեւ պատերազմական աւար։ Հնագիտական ինստիտուտի հրատարակութիւնը մօտ երեք պուդի ծանրութիւն կունենայ։

—

«Нов. Время» լրագիրը լսել է, որ մասնաւոր բանկերին կարգելվի յունվարի 1-ին դիվիդենտներ տալ ակցիաների համար, մինչեւ որ բանկերը չը ներկայացնեն հաշիւներ իրանց գործունէութեան մասին, որոնցից պարզապէս երեւայ, թէ կանոնաւոր կերպով են որոշել դիվիդենտները։

—

Մօտ հարիւր հոգի Թիֆլիսի քաղաքային ապանդանոցում ծառայող մտագործներից մօտ օրերումս դիմեցին Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարին եւ խնդրեցին աջակցութիւն ցոյց տալ նրանց համար կիրակի օրեայ հանգիստ սահմանելու գործում՝ սկսած հոկտեմբերի 1-ից մինչեւ ապրիլի 1-ը։ Նահանգապետի ժողովված տեղեկութիւններից երեւաց, որ մտագործների խնդիրքը կատարել հնարաւոր է միայն այն դէպքում, եթէ շաբաթ օրերը մորթվեն այնքան քանակութեամբ մսացու անասուններ, որ նրանց միսը բաւականացնայ Թիֆլիսի ազգաբնակութեանը կիրակի եւ երկուշաբթի օրերի ընթացքում։ Իր կողմից պ. նահանգապետը, ցանկալի համարելով կիրակի օրեայ հանգիստ սահմանել մտագործների համար, առաջարկեց Թիֆլիսի քաղաքային ուպրավային կարճ ժամանակվայ ընթացքում մշակել եւ ներկայացնել քաղաքային դումայի քննութեանը պարտաւորական կանոններ այս հարցի վերաբերմամբ։

—

Զրահեղծութիւնից ազատող ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ հաղորդել, որ հինգշաբթի, նոյեմբերի 29-ին, Նիկիտին եղբայրների ցիրկում տեղի կունենայ ներկայացում, որից գոյացած արդիւնքի մի մասը պէտք է յատկացնվի այդ ընկերութեան օգտին։ Այս պատճառով ընկերութեան խորհուրդը խնդրում է այն բոլոր անձանց, որոնք համակրում են ընկերութեան մարդասիրական նպատակին, ներկայ լինել ցիրկի ներկայացմանը։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը, մայրաքաղաքի լրագիրների ասելով, մշակել է նոր կանոնների ծրագիր ոսկու հանքագործութեան վերաբերմամբ։ Այս նոր կանոններով աւելի հեշտացրած է ոսկու հանք գտնողներին արքունական հողեր յատկացնելու գործը։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Նոր կառուցվող երկաթուղու գիծը մօտենում է Երեւանին։ Նա այժմ գտնվում է մի 20 վերստ հեռաւորութեան վրա։ Մի երկու շաբաթ եւս եւ Ալէքսանդրապոլից գնացքները կը մտնեն Երեւան։ Բոլորը անհամբեր սպասում են այդ օրին։ Երկաթուղու դեռ չաւարտված կայարանը կարծէք ուխտատեղի լինի, այնքան շատ է կիրակի օրը այցելութիւնների թիւը։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Հայր Ալիշանի մահվան բօթը սուգի մէջ գցեց քաղաքիս հայ կաթոլիկներին։ Իրանց ցաւակցութիւնը վենետիկ հեռագրով յայտնելուց յետոյ, ասոնս 20-ին, չորեքշաբթի օրը, հոգեհանգիստ կատարեցին տեղիս ս. Աստուածածնի վերափոխման եկեղեցում։ Այդ օրը պատարագը սովորականից ուշ էին սկսել ի պատիւ հանգուցեալի։ Պատարագիչը «հաւատամքի» ժամանակ գեղեցիկ կերպով պատմեց պատկառելի ծերունու հաւատօ կենսագրութիւնը։ Եկեղեցու մէջ տեղը դրված էր դիզարդ, նրա վրա փռված էր թանգագին շուրջառ, որի վրա դրված էին քահանայական սաղաւարտ եւ արծաթեայ վակաս, վակասի մէջ տեղուտ կենդանի ծաղիկներից հիւսված պսակի մէջ բարձրանում էր հայր Ալիշանի մեծադիր պատկերը, աջ կողմում ունենալով արծաթապատ Աւետարան։ Պատարագից յետոյ անմիջապէս սկսվեց հոգեհանգիստը։ Արհեստաւորներից Գէորգ Քաջուրեան մի գեղեցիկ դամբանական կարդաց, որը լաւ տպաւորութիւն թողեց ժողովրդի վրա։ Հանդիսին բացի հայ-կաթոլիկներից ներկայ էին եւ չատ հայ լուսաւորչականներ։

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամսոս 25-ին հայ-լուսաւորչականների եկեղեցում, մի խումբ մարդկանց նախաձեռնութեամբ, պատարագից յետոյ, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց հայր Ալիշանի համար։ Եկեղեցին լիքն էր լուսաւորչական եւ կաթոլիկ հայերով։ Ներկայ էին մեր բոլոր քահանաները, բացի մեր վիճակի փոխանորդ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանից, որը Յակոբ քահանայ Կիրակոսեանի հետ միասին գնացել էր Ղանի գիւղի եկեղեցին օծելու։ Կաթոլիկ հոգեւորականներից ոչ ոք չը կար։ Տարօրինակ է, փոխանակ ժողովուրդը հոգեւորականից օրինակ վերցնելու, ինչպէս երեւում է, մեր կաթոլիկ հոգեւորականները կարիք ունեն ժողովրդից առաջնորդվելու։ Ո՞ւր են մնում այն խօսքերը, որ մենք մի ենք եւ խարութիւն չը պէտք է դնենք հայ-կաթոլիկ եւ հայ-լուսաւորչականի մէջ, միթէ անկեղծ չեն մեր խօսածները. Ինչ պէտք է խօսքերն ու գործերը միմեանց համապատասխանեն։ Որչափ ուրախալի կը լինէր տեսնել միասին մեր եկեղեցում, գոնէ Ալիշանի յիշատակին կատարված հոգեհանգստի միջոցին, միմեանց մօտ մեր եւ հայաբիւն կաթոլիկ եղբայրների հոգեւորականներին։ Անկողմնապահութիւնը պահանջում է ասել, որ որքան էլ մեր հոգեւորականները յետ մնացած լինեն ժողովրդից եւ նոյն իսկ օտարասում ձգտման հետեւեն, գոնէ նրանք աւելի լայն տիրա ունեն եւ հայրերող են (եթէ, ի հարկէ, չը հաշուենք ատատուածաբան-տիրացուներին), քան մեր եղբայրակից կաթոլիկները, որոնց երեւի դեռ չատ ժամանակ է հարկաւոր հայերաշխութեան գաղափարն իր իսկութեամբ ըմբռնելու եւ գործով համերաշխ լինելու. ի հարկէ, խօսքաչքի ընկնող բացառութիւնների մասին չէ. հոգեհանգստի ժամանակ խօսեց Տարէն քահանայ Սատաղլեանը եւ ճառեր կարդացին պ. պ. Հասամշեան, Քէքէճեան (հայ կաթոլիկ) եւ Նոհրատեան։ Բոլորն էլ դրուատելով հայր Ալիշանին, նրա ազգասիրութիւնը, նրա աշխատութիւններն ու բանասաեղծութիւնը եւ ուրախութիւն յայտնելով, որ այսօր կաթոլիկ եւ լուսաւորչական հայերի մէջ, եթէ ժամանակը չէ հասել, գոնէ ժամիկ է համերաշխութեան եւ «եղբայր ենք մեք» գաղափարի լայն ժաքով ըմբռնելու, իրանց ցաւակցութիւնը յայտնեցին հայ ազգի այդ ծանր կորուստի առիթով։ Հոգեհանգստից յետոյ շատ ուրախ եւ մխիթարական ապաւորութեան տակ ցրվեց ժողովրդի խուռն բազմութիւնը»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 19-ին, գիշերը ժամի 10-ին, քաղաքում մի սրտաճմլիկ դէպք պատահեց։ Մի տան տանիքի մի մասի գերանները կտրվելով, փուլ եկաւ ու տակով արաւ տանը քնած վեց անդամներին։ Նոյն ընտանիքի մեծ որդին, որ իր կնոջ հետ քնած է լինում տան մօտի մառանում, քնի մէջ լսում է ճչոց ու թրփոց. տեղից դուրս է գալիս, որ տեսնէ ինչ պատահեց. մառանի դուռը բաց է անում, տեսնում է իրանց տան տանիքի մի մասը փուլ եկած եւ ոչ իր մայրն ու եղբայրը կան, ոչ իր չորս եղբեխանները. ձայն է տալիս կնոջը՝ թէ վերկաց, տունը փուլ է եկել տանեցիների վրա։ Դժբախտ մարդ ու կինը մի կերպով դուրս են քաշում գերանների տակից երեք փոքրերին առողջ. բայց երբ ուժասպառված էլ ոչնչով չեն կարողանում ազատել միւս երեքին, օգնութեան են կանչում հարեւաններին. հարեւաններն էլ բօթը լսելով, վրա են հասնում բահով ու թիով, փլուածքը այս ու այն կողմն են գցում, դուրս են բերում միւս երեքին էլ, բայց անշնչացած։ Այդ իսկ րոպէին, քաղաքային բժիշկը գալիս է ազէտի տեղը, նայում է առողջներին ու մեռածներին եւ հրամայում է, որ այսուհետեւ փուլ եկած տան մէջ էլ չը բնակվեն։ Բայց հարեւանները, որ լաւ գիտէին իրանց դրացու աղքատութիւնը, հէնց նոյն օրը քաղաքից փող ժողովելով, մօտաւորապէս եօթանասուն բուբլի, 5 բուբլով փուլ եկած տունը նորոգեցին, իսկ մնացած վաթսուն ու հինգ բուբլով հողին յանձնեցին երեք դիակները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

Բոստոն, Նոյեմբերի 15-ին

Յուրաքանչիւր օրին հետ սկսան մեր տաք ժողովները։ Անգամ մաղ խանդը կը թ.ոգաւորէ. իրարու մօտ քաղաքներ, գրաղարանի հանդէս, դպրոցասիրաց երեկոյթ, թատերական ներկայացում եւ այլն իրարու կը յաջորդեն անընդ-

հաս շարքով։ Մեր սակաւաթիւ ատենախօսները բեմէ բեմ կը թռչին ունկնդիրներու ականջներուն գոհացում տալու։ Խնամով պատրաստած ճառեր չեն լսուածները, այլ օրական դէպքերու, ժամվան պէտքին տպաւորութեանը տակ արտասանված կրկնութիւններ, որ նոյն առանցքին շուրջը կը դառնան. սակայն քանի որ կեդրոնական գաղափարը հանրային օգուտն է, ոչ թէ այս կամ այն անհատին քաջը, եւ մանաւանդ քանի որ հատարակութիւնը այնքան դժուարութեամբ կը ճանչնայ իր պարտքը, լաւ է որ կրկնվին քարոզները, ոմվ գիտէ կարելի է մի օր մեր մէջ ալ կը կատարվի հրաչքը։

Վերջերս տեղական մամլոյ հրատարակած մի քանի հեռագրերը յուսադրեցին գաղթականութիւնը. Թրքահայաստանի բարեկարգութեան մասին շրջած զրոյցները, եթէ ուրիշ լուրջ հետեւանք ալ չունենան, գէթ հոս այնքանը արտադրեցին, որ հայրենիքի վիճակէն յուսահատ գաղթականը քիչ մը փոփոխեցաւ, եռանդ ու ոգեւորութիւն ստացաւ։ Ամերիկայի հայերուն համար հայրենիքի յոյսը շատ մեծ նշանակութիւն ունի, առանց այդ յոյսին այստեղի հայութիւնը կորսուած համարելու է։ Ոչ կրօնաւորներ, ոչ մամուլը չեն կրնար բարոյականի տարրական կանոնները զգացնել յուսահատ մոլորածին, սակայն թող հեռագիր մը երեւնայ լրագրի մը մէջ, թող ըսեն թէ դեռ հնարաւորութիւն կայ երկիր դառնալու եւ ահա ցեխի մէջ ինկած, քարոզ ու խրատ արհամարհող մարդը կը ձգէ օղին, անառակութիւնն ու խաղը, կը սկսի լրջօրէն ապագայի վրա խորհիլ։

Այս է թերեւս գլխաւոր պատճառը, որ հիմա ժողովներու մէջ կը հանդիպիս ունկընդիրներու բազմութեան եւ ընդհանուր ոգեւորութեան։

Ուրիշ պատճառ մ'ալ կայ. մէկ երկու ամիս է, որ կանգ առեր են կուսակցական վէճերը ու բանակռիւները։ Հակակցողութիւնը ընդհանուր է, թէ հաւաքական շահեր ձեռք բերելու համար հաւաքական ոյժը անհրաժեշտ է, լաւ ըմբռներ են, թէ առանց միութեան, հիմակվան բաժանումները վնասէն տարբեր բան մը չեն կրնար յառաջ բերել։ Այս խելօք ըմբռնումը պիտի կրնայ վերջ տալ ունայն կռիւներու։ Ամերիկայի մէջ այդ անկարելի չէ, սակայն դժբաղդաբար Եւրոպայէն հոս եկող ամեն կարգի ու գոյնի թերթեր այդպէս չեն մտածեր, հրատարակութիւններ կան, որ վէճ ու կռիւ հանելուն, անձնական հաշիւներ ապահովելու կեչումը միայն ունին եւ շատ քիչեր են, որ այդ կրնան ըմբռնել, մեծամասնութիւնը այս կամ այն թերթին կամ խումբին անպայման հետեւող է առանց գիտակցութեան կամ խորհրդի։ Դեռ կարելի չեղաւ Ամերիկայի հայոց անկախ հասարակաց կարծիքը ստեղծել։ Սակայն խնդրոյ մը մասին ժողովրդին փափաքը շատ պարզ է. միութեան խնդիրն է այն. այն օրէն, որ թերթերը դադրեցուցին կուսակցական-անձնական կռիւները, հասարակութիւնը հասկրել սկսաւ քարոզուած գաղափարներուն։ Սառդ է ուրեմն թէ ժողովուրդը կարծուածին չափ անտարբեր չէ, եթէ ազգին գործերուն խառնուողները քիչ մը համբերաշխութեամբ ապրել գիտնան։

Ամերիկայի հայութիւնը ներկայիս արտասահմանի հայ գաղթականութեանց ամենէն կարեւորը կրնայ համարուիլ իր ձգտումներով եւ նիւթական ուժերով։ Տարակոյս չը կայ թէ հոս տիրող գաղափար մը շուտով պիտի արձագանքէ եւ ուրիշ տեղեր։ Զը կայ նիւթ մը, որուն վրա այնքան խօսեն, որքան միութիւնը. մանաւանդ վերջերս ամեն ժողովի մէջ մէկ կամ երկու առենախօս պէտք է անպատճառ օրուան խնդիրը ձեռք առնեն։ Կը մնայ տեսնել թէ Ամերիկա պիտի կրնայ իր ձայնը լսել տալ, հակառակ պարագային այստեղի ազգային ձգտումները մեծ հարուած պիտի կրեն, խանդավառութեան պիտի յաջորդէ վհատութիւնը։

Գաղթականութեան մէջ ուշադրաւ են նորեկ երիտասարդները. մինչ հիները մէկ մէկ մոլութիւն չոլկած հեռու կը փախչին հայկական կեանքէ, նոր սերունդը արտասովոր ոգեւորութեամբ կը փարի ազգային գործերուն։ Մէկ երկու քաղաքի գրադարան-բարանները վարողները բացառապէս նորեր են, ջարդէն վերջ Ամերիկա եկող պատանիներ։ Հիանալի է մէկ քանի տարուան մէջ կատարուած փոփոխութիւնը. հիները եւ նորերը կարծես նոյն ազգին չեն վերաբերիր. այնքան եռանդուն գործունեայ կերեւին պատանիները 30—40 նոցներուն բաղդատմամբ, որոնց ամենէն լաւն ալ վարդապետական հաւեր ունի։ Եթէ Հայաստանի ժողովուրդն ալ այս համեմատութեամբ փոխուեր է, եւ եթէ օր մը բաղդ ունենանք հայրենիք դառնալու, հոն շատ հաճելի անակնկալներու պիտի հանդիպինք։

Արմէն

ԱՐՁԱԳԱՆՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Polit. Correspond.» լրագիրը հաղորդում է, որ Բ. Դուռը զիջեց Կ. Պոլսի աւտարոտունգարական դեսպանի պահանջներին եւ, վերջապէս, թոյլատրեց Ֆրանսիսկեաններին կաթոլիկական եկեղեցի կառուցանել Սկուտարիում։ Այնտեղի կաթոլիկները, որոնց թիւը հասնում է 10,000-ի, արդէն ունեն մէկ եկեղեցի եւ հինգ մատուռ։ Նոր եկեղեցին կը միացնի Ֆրանսիսկեանների վանքին։ Բ Դրան գլխաւոր առարկութիւնը այդ եկեղեցու կառուցման դէմ այն էր, որ եկեղեցին, ինչպէս յատակագծից երեւում է, շատ երկիւղ ազդող տպաւորութիւն է գործում եւ աւելի բերդի է նմանվում։

—Ֆրանս-Թիւրքական ընդհարման ելքի մէջ «Moniteur Ottoman» լրագիրը Ֆրանսիայի կատարեալ պարտութիւնն է տեսնում։ Սուլթան Արդուլ-Համիդը, եթէ դողում էր ֆրանսիական նաւատորմը Թիւրքաց ջրերը ուղարկելու լուրը առնելուց, այդ ոչ թէ այն պատճառով,—ասում է լրագիրը,—որ նա տիպված պէտք է լինէր ընդունել Ֆրանսիայի օրինական պահանջները, այն է՝ պէտք է վճարէր Լօրանդօի եւ Տուբինիի պարտքը, ազատէր կաթոլիկների դպրոցները եւ վանքերը ճնշումներից եւ հատատէր հայ-կաթոլիկների պատրիարք Պողոս Էմմանուէլեանի ընտրութիւնը։ Արդուլ-Համիդը հաւատացած էր, որ Կալեարի նաւատորմը ուղարկելուց յետոյ՝ Ֆրանսիան կը պահանջէ իրագործել Բերլինի կոնգրէսում Թիւրքիայի տուած խոստումները ռէֆորմներ մտցնելու մասին Հայաստանում եւ Մակեդոնիայում։ Այն ինչ Դէլկասէ Բուրբոնեան պալատում իր արտասանած ճառի մէջ առաջինն էր, որ հանգստացրեց սուլթանին՝ յայտնելով, որ ռէֆորմների հարցը չէ կարելի կապել նաւատորմն ուղարկելու հետ։ Թիւրքիայի քրիստոնեաները եւ երիտասարդ Թիւրքերը չեն կարող դժգոհ լինել Դէլկասէից, որը պարզապէս հասկացնել տուեց, թէ որքան էլ ինքը ցանկանար թեթեւացնել Թիւրքաց քրիստոնեաների դրութիւնը, ոչինչ չէր կարող անել, քանի որ Բերլինի դաշնագրի տակ, բացի Ֆրանսիայի ներկայացուցչի ստորագրութիւնից, կան եւ մնացած հինգ մեծ պետութիւնների ստորագրութիւնները։ Դէլկասէի բացատրութիւնից յետոյ, անգլիական եւ գերմանական մամուլը իսկոյն տարածեց մի ինսինուացիա Ռուսաստանի դէմ, ասելով, որ «Դէլկասէին միայն Ռուսաստանն էր, որ չը թողեց բարձրացնել Թիւրքիայի ներքին հարցերը»։ Այն ինչ առողջ բանականութիւնը ասում է, որ Ռուսաստանը առիթ չունէր արգելք հանդիսանալու իր դաշնակցի մարդասիրական քայլին, եթէ Թիւրքիային պաշտպան չը կանգնէին երեքպետեան դաշնակցութիւնը եւ Անգլիան։

—«Новости» լրագրին հեռագրում են Լօնդօնից. «Որովհետեւ վերջին ժամանակ լուրեր էին տարածված լրագիրներում, թէ շուտով բանակցութիւններ պէտք է սկսվեն անգլիացիների եւ բօէրների մէջ խաղաղութեան կամ զինադադարի վերաբերմամբ, մենք տեղեկութիւններ հաւաքեցինք այս հարցի մասին այնպիսի անձերից, որոնք անմիջական յարաբերութիւններ ունեն նախագահ Կրիւգէրի հետ։ Այդ անձինք պնդում են, որ ոչ առաջ եւ ոչ այժմ տեղի չէ ունեցել մի այնպիսի հանգամանք, որ հատատէր յիշված լուրերը։ Ընդհակառակը՝ ինքը Կրիւգէր եւ բօէրներին ղեկավարող բոլոր գեներալները ամենայն հաստատակամութեամբ պահպանում են այն տեսակէտը, թէ պատերազմը կը շարունակվի այնքան ժամանակ, մինչեւ որ Անգլիան հաւանձնվի բանակցութիւնների հիմք ընդունել բօէրների կատարեալ անկախութիւնը։ Մի եւ նոյն ժամանակ պէտք է ասել, որ բօէրները ամենեւին յոյս չեն դնում եւրոպական պետութիւնների կամ Ամերիկայի միջամտութեան վրա, այլ է նկատի ունեն միայն իրանց սեփական ոյժերը։

—Նոյն «Новости» լրագրին հեռագրում են Բերլինից, թէ ասղիալիստները բէյխստագ տարան ասյլերով 26 հակեր, մօտ 50 ցենտներ ծանրութեամբ, որոնք պարունակում էին իրանց մէջ զանազան քաղաքների եւ համայնքների հանրագրերը մաքսային օրինագծի դէմ։ Բէյխստագի դիմադրական կուսակցութիւնը չէ թագցնում, որ ինքը դիտաւորութիւն ունի ձգձգել այդ օրինագծի քննադատութիւնը, զանազան մանամասնումների յանձնելու միջոցով, գոնէ երկու տարի, յոյս ունենալով, որ այդ ժամանակամիջոցում տեղի կունենան նոր ընտրութիւններ, որոնք կը տան խոշոր կալուածատէրերին հակառակ մեծամասնութիւն։ Մոլկենբուրգ ասաց բէյխստագում, թէ հացահատիկների նոր մաքսադների բեռը, որ կամենում են բարդել ապառողների վրա, կը հասնի տարեկան 110 միլիոն ահագին գումարի, իսկ այս գումարի կապիտալիզացիան կը կազմէ 18 միլիարդ, այսինքն մի գումար, որ երեք անգամ աւելի է, քան Ֆրանսիայի վճարած պատերազմական տուգանքը Գերմանիային։

—Զը նայելով, որ յունական «Ասա» եւ «Ակրոպոլիս» լրագիրների խմբագրատները պաշտպանվում են ոտիկաններով եւ նրանց խմբագիրները կարող են ապանվել խմբագրատներից դուրս գալու ժամանակ, այդ լրագիրները շարունակում են պաշտպանել Գալիսին, որ թարգմանել է աւետարանը հին յունարէնից նոր յունարէնի, եւ խստիւ պախարակել համալսարանական երիտասարդութիւնը «հայեցքների յետամնացութեան», ժամանակի ոգու եւ պահանջների անհասկացողութեան եւ բողոքներ յայտնելիս գործադրած բռնի-բռնազուկային միջոցների համար։ «Ուսանողները պնդում են,—ասում է «Ակրոպոլիս»,—թէ նրանց բողոքը կրօնական ֆանատիկոսութիւնից չէ բղխում, այլ իբր թէ կլասիքական յունական լեզուի պրոֆանացիայից, որին ենթարկվել է նա Աւետարանի աշխարհաբար թարգմանութեան մէջ։ Այդ դէպքում ինչու ուսանողները աղմուկ չը բարձրացրին, երբ լոյս տեսաւ Եղիսկանի թարգմանութիւնը նոր յունական լեզուով։ Որովհետեւ նրանց հայրենասիրական զգացմունքի համար դուրեկան է այն հանգամանքը, որ մեծ երդչի ստեղծագործութիւնները մատչելի դարձան յոյն գիւղացուն, կառապանին եւ նաւավարին։ Եթէ այդ այդպէս է, ինչու երիտասարդ ինտելիգենցիան չէ կամենում հասկանալ, որ յոյն գիւղացին աւելի մեծ պահանջ է զգում հասկանալու Աստուծու խօսքը, քան առասպելական վիպասանութիւնը։ Ուրիշ բան կը լինէր, եթէ Գալիսի թարգմանութեան հետ միասին տեղի ունենար կարգադրութիւն արեւելեան պատրիարքի եւ Աթէնքի սինոդի կողմից մտցնելու հանրամատչելի թարգմանութիւնը եկեղեցիներում։ Բայց այդպիսի բան չը կայ։ Ընդհակառակը՝ Էրնէստ Բէնանի փեսայ՝ յայտնի լեզուագէտ Իօհան Պոիխարիսի չկօյին հետեւող Գալիս բոլորովին անարժան կերպով ենթարկված է անէծքի։ Եթէ թէօրիականապէս համալսարանական երիտասարդութիւնը պէտք է աւելի ազատամիտ եւ մարդասէր լինի, քան նրա արեւելագրված նախորդները, այդ դէպքում նրա բողոքները յատենայն դէպս ուղղված պէտք է լինէին Աթէնքի սինոդի կարգադրութեան եւ ոչ Աղեքսանդր Գալիսի օգտաւէտ աշխատանքի դէմ, որ դրա հետ միասին կատարված է շատ տաղանդաւոր կերպով»։ Խօսելով նոյն ոգով «Ասա» ցաւ է յայտնում, որ երկրի ապագայ կառավարիչները ցոյց տուին իրանց Եւրոպայի բոլոր ուսանողների առաջ իբրեւ «ջերմ հնամոլներ եւ բուռ խաւարամիտներ»։ «Զեր այդպիսի ուսմամբ եւ կրթութեամբ,—ասում է լրագիրը դիմելով ուսանողներին,—դուք չէք կարող Բուխարէստում եւ Եսիում յունական ինտելիգենցիայի ներկայացուցիչ լինել եւ կատարել որ եւ է քաղաքական միսիա։ Դուք շատ լաւ ընկեր կը դառնանք Կ. Պոլսի ուլէմներին եւ սոֆիաներին, որոնք «Իսլամի արքայդրութիւն» են համարում թարգմանել Կորանը արաբերէնից մի այլ լեզուով, թէկուզ այդ ազգի լեզուով, որ դաւանում է մահմեդականութիւն»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 26-ին Պետերբուրգ ժամանեցին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհիներ Մարիա Ֆէօդորօվնա եւ Աղեքսանդրա Ֆէօդորօվնա, Նորին Բարձրութիւն Թագաժառանգը, Մեծ-Իշխան Սերգէյ Աղեքսանդրովիչ Օգոստափառ Ամուսնու հետ եւ Մեծ-Իշխանուհի Օլգա Աղեքսանդրովնա Իր Ամուսնու հետ։

Նոյեմբերի 26-ին մեծ հրդեհ պատահեց Շապշալի ծխախոտի գործարանում. կրակեց եւ հրդեհը հանգցնելու ժամանակ ածված ջրից համարեա ամբողջ գործարանը ոչնչացրած է։ Գործարանը ապահովագրված էր Վարշավայի ապահովագրական ընկերութեան մէջ։ Այս հրդեհի հետ միաժամանակ տեղի ունեցաւ եւ մի ուրիշը գազի գործարանում, որ պատկանում է մայրաքաղաքի լուսաւորութեան գազի ընկերութեան։ Կրակը սկսվեց այն պահեստից, որի մէջ գտնվում էր 200,000 պուդ քարածուխ։ Գործարանը ապահովագրված է մէկ միլիոն բուբլով։ Վնասը մեծ է, բայց դեռ եւս որոշ կերպով պարզված չէ։

ՄՕՍԿՎԱ։ Նոյեմբերի 25-ին Սօկոլնիկի անուանված քաղաքամասում բացվեց Բախրուշինի անունը նուիրված քաղաքային ապաստարանը ընկեցիկ երեխաների համար։ Մատաղութիւն կայ բանալ այնտեղ ուսումնարաններ եւ արհեստանոցներ. այժմ կառուցվում է մի մեծ տաճար։ Առ այժմ ապաստարանի մէջ կընդունվեն 125 հոգի միայն։—Նոյեմբերի 25-ին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան խորհրդի անդամ Զվերեվի, ուսումնարանական շրջանի հոգաբարձուի եւ պաշտօնեաների ներկայութեամբ, հանդիսաւորապէս օրհնվեցին Շելապուտինի գիմնազիայի նոր շինութիւնը եւ եկեղեցին։ Առ այժմ բացված են միայն նախապատրաստական եւ առաջին չորս դասարանները 175 աշակերտներով։ Մրատարութիւն կայ գիմնազիային կից բանալ հանրակացարան եւ սեմինարիա ուսուցիչներ պատրաստելու համար։

ՄԻՏԱՎԱ։ Միտաւայից 50 վերստ հեռու իսպառ այրվեց իր ամբողջ շքեղ կահաւորութեամբ պետական խորհրդի անդամ կոմս Պալէնի դղեակը. անվնաս մնաց միայն նախորդների գալերէյան։ Հրդեհը պատահեց տէրերի բացակայութեան ժամանակ։

ՊԱՐԻԶ, Նոյեմբերի 24-ին դեսպան իշխան Ուրուսով հանդիսաւոր նախաճաշ տուեց ի պատիւ Մեծ-Իշխան Վլադիմեր Ալէքսանդրովիչի եւ Նրա Ամուսնու։—Նոյեմբերի 25-ին, հանրապետութեան նախագահը այցելութիւն տուեց Մեծ-Իշխանուհի Մարիա Պաւլովնային։

ՍՕՖԻԱ։ Լրագիրների տեսլով, ձերբակալված է մի մակեդոնացի Ստամբուլով անունով, որին կոչում էին նաեւ Գալիւ եւ որ յայտնի կերպով ապրում էր Սօֆիայում, թէպէտեւ գտնվում էր ոտիկանութեան գաղտնի հսկողութեան տակ, որովհետեւ կասկած կար, թէ նա մասնակցել է Ստամբուլովի ապտանութեան գործին։ Ձերբակալութեան պատճառը անյայտ է։

ՊԱՐԻԶ։ «Journal Officiel» վաղը կը տպագրէ հրաման չինական փոխառութեան հրատարակման վերաբերմամբ։ Հրատարակումը տեղի կունենայ դեկտեմբերի 8-ին։

ՎԻԵՆՆԱ։ Աւստրիական առեւտրական միութիւնը, ի նկատ առնելով Ռուսաստանի հետ կապված առեւտրական դաշնագրի վերանորոգման հարցը, մի մասնաժողով ընտրեց, որին յանձնեց ծանօթանալ խոշոր եւ մանր արդիւնագործութեան ներկայացուցիչների ցանկութիւնների հետ եւ զեկուցում կազմելով այդ ամենի մասին, ներկայացնել կառավարութեան։ Վիճաբանութիւնների ժամանակ նախագահը հաղորդեց, թէ արտաքին գործերի մինիստրը, մինիստր-նախագահը եւ առեւտրի մինիստրը հաւատացրին միութեան պատգամաւորներին, թէ վերջինները կարող են յոյս դնել նրանց աջակցութեան վրա եւ թէ ապրանքների արտահանութեան աւելացումը դէպի Ռուսաստան եւ Բալկանեան պետութիւնները նրանց համար շատ ցանկալի է։ Ռուսաց դեսպանը նոյնպէս հաւատացրեց պատգամաւորներին, թէ ջանքեր գործ կը դնէ զարգացնելու առեւտրական յարաբերութիւնները Աւստրիայի եւ Ռուսաստանի մէջ։

ՕԴԷՍՍԱ։ Պաշտօնական տեղեկութիւններին նայելով, ձիերի մեծ քանակութեամբ ուղարկումներ Օդէսայից ամբողջ տարվայ ընթացքում չեն եղել։ Ուղարկումները սահմանափակվել են մի քանի կամ մի քանի տասնեակ ձիերով. ընդհանուր առմամբ արտահանված է աւելի քիչ, քան մինչեւ այժմ։ Այն լուրը, թէ անգլիացիները ձիեր են գնում, տարածված է ձիավաճառների կողմից՝ գները բարձրացնելու նպատակով։ Ի նկատի չը կան ոչ խոշոր գընումներ եւ ոչ ուղարկումներ։

ՎԻԵՆՆԱ, Աւստրիական առեւտրական միութեան ներկայացուցիչը լիազօրութիւն է ստացել միութեան կողմից նախապատրաստական միջոցներ ձեռք առնել աւստրիական բաժինը տարքելու համար 1903 թուին Մոսկվայում բացվելիք միջազգային ցուցահանդէսում։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Տեղական բժիշկները հարց են բարձրացրել պարտաւորաբար 4000 բուբլով ապահովագրելու մասին այն բժշկին, որ ծառայութեան է հրաւիրվում ժանտախտի դէմ մարտնելու ժամանակ։

27 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 26-ին, ս. Գէորգի տօնի եւ Մեծ-Իշխան Գէորգի Միխայլովիչի անուանակոչութեան տօնի օրը, Ձմերային պալատում տեղի ունեցաւ Բարձրագոյն հանդիսաւոր ելք դէպի Ձմերային պալատի մեծ եկեղեցին, եւ ապա դէպի Գէորգիեվսկի դահլիճը, որտեղ կայացաւ եկեղեցական զօրահանդէս։ Ապա տեղի ունեցաւ հացկերոյթ Ձմերային պալատի դահլիճներում, որին մասնակցեցին Գէորգիեվսկի խաչի ասպետները։

ՄՕՍԿՎԱ։ Նոյեմբերի 27-ին, դէպի Անգլիա են ուղեւորվում 32 գիւղատնտեսներ Ռուսաստանի զանազան տեղերից, որոնց մէջ են գիւղատնտեսական ընկերութիւնների նախագահներ, ձուավաճառներ, անասնապահներ, մսավաճառներ եւ կաթնատնտեսութեան ինստրուկտորներ։ Ճանապարհորդութեան նպատակն է ծանօթանալ անգլիական շուկայի պահանջների եւ գործերի դրութեան հետ օրինակելի անտեսութիւնների մէջ։ Ճանապարհորդութիւնը պիտի ղեկավարէ երկրագործու-

թեան մինիստրութեան լիազօրը Կալուգայի նահանգում—Կրիլկով։

ՈՒՖԱ։ Նոյեմբերի 25-ին, ցերեկվայ ժամի 3-ին մօտ, Զլատօուստում նկատվեց երկրի տատանումն։ Մօտ կէս րոպէ լսվում էր ստորերկրեայ գոռոց։ Դժբաղդութիւններ մարդկանց հետ կամ շինութիւնների վնասներ չը պատահեցին։

ԼՕՆԴՕՆ։ Լրագիրները հաղորդում են Գրեատօրիայից, թէ նախկին Ֆէլդկօրնէտներ Սէյեր եւ Կոլլինս միացան անգլիական գնդին եւ բերին իրանց հետ նշանաւոր թուով նորակոչներ Բուատէնբէրգի շրջանից։ Այս հանգամանքը նպաստեց անգլիական գործող բանակի թուի բազմանալուն։

ԼԷՅՊՑԻԳ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը յայտնեց, թէ այն հատուկ նպաստները, որ տալիս են ռուսաց իգական գիմնազիաները, բաւարար չեն այսպէս հատկացարանը մտնելու համար եւ թէ այս կանոնից ոչ մի բացառութիւն չի անվի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վարչական ուսումնարանական շրջանի հոգաբարձու Զէնգէրին Բարձրագոյն հրամայված է լինել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական։ Հակաժանտախտային մասնաժողովի կողմից յայտարարվում է, որ Կ. Պոլիս, Ալէքսանդրիա եւ Պորտ-Սայիդ քաղաքները ժանտախտի կողմից համարվում են բարեյաջող։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՈԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. ժամաւորապէս
ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергіевская ул., д. 12.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
իրանց բոլոր պատկանելիքներով մի չոգեկաթոսայ, մի չոգեմեքենայ եւ մի տինամո-մեքենայ, որոնք պէտքական են գործածութեան համար։ Պայմանները իմանալու համար պէտք է դիմել Աշնականութեան կալուածների վարչութեան գրասենեակը, որ գտնվում է Դվորցովայա փողոցի վրա, Աշնականութեան տան մէջ (գրասենեակի համարը 153 է) իւրաքանչիւր օր, առաւօտեան ժամի 11-ից մինչեւ ցերեկվայ ժամի 3-ը։ 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 բ. եւ 1 բ. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու եւ ուրացնելու համար, աշնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, սնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 բ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով։ 5—100

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա դիւանատանը 1901 թուականի նոյեմբերի 30-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Գավլովսկայա փողոցը ամբողջովին քարայատակելու աշխատանքը 597,31 քառակուսի սաժէն քանակութեամբ, 2603 բ. 11 կոպ. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Ուպրավայի շինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը։
2—3

ՈՍԿԵԳՈՑՆ ԵՒ ԱՆՈՒՇԱՀՈՏ
ՄԵՂՐ
Ա. ՄԻՒԹԱՐԵԱՆԻ ՄԵՂՈՒԱՆՈՑԻՑ
Ծախվում է Լերմոնտովսկայա փողոցում, Տէր-Միքայէլեանի № 3 տանը, Աբաս-Աբաղակայա հրապարակի մօտ, մուտքը գաւթից։ Բարձրանալ ձախակողմեան վերնայարկը։
Մեղրի պուդը—8 բուբլի, ֆունտը—25 կոպէկ։

Մամուլի տակից դուրս եկաւ եւ վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ
„ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ“
գինն է 50 կոպէկ։
Նոյն գրատանը վաճառվում են հեղինակի եւ միւս աշխատութիւնները.—«ՍԱՆԹՕ», վէպիկ հայ բօշաների կեանքից—գ. 30 կոպ., «ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ» ազգագրական ուսումնասիրութիւն—գ. 50 կոպ. եւ «ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐ»—գ. 5 կոպ.։ Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (չ.) 8—10

ՀԱՄԼԻՑԻ ԴԵՐԵՐՈՒՄ
Տ. ՍԻՐԱՆՈՅԾԻ
Նկարված 10 զանազան տեսակ լուսանկար պատկերները (կաբինէտ դիրքով) վաճառվում են Թիֆլիսում. 1) «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցում. 2) Երիւանցի խանութում (Երեւանեան հրապարակի վրա). 3) «Գրօգրէս» ծրխախոտի խանութում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, ժողովարանի տակը։
Նկարված կան նաեւ ատէրէակօպի համար 10 տեսակ։ Իւրաքանչիւր հատը արժէ 30 կ. օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Թիֆլիս, «Գուտտէնբիրգ» գրավաճառանոցը։ 3—3

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԵՐ
Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ
Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գընահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հատատելը օրէնսդրական կարգով եւ այլն։
ԲԱԳՈՒ, «Դվորցովայա Նովէրներ» հիւրանոցում Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։
32—100

ԱՏԱՄՆԱԲՈՅԾ
Լեւոն Կարապետեան
Դարմանում է ատամներ, շինում է պլոմբներ, ոսկէ պակներ արմատների վրա նստացնելու եւ կեղծ ատամներ ոսկէ եւ կաուչուկէ պլատինկաների վրա։
Ընդունում է հիւանդներ ժամը 9-ից առաւօտեան մինչեւ ժամը 7 երեկոյեան։
ԻվՍօլոլակայա փողոցի վրա, տուն Միրզոեւ № 6. 21—30

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ
արհեստանոցում
բնութեան տեսարանների (պէյզաժ) նկարչութեան դասեր, կիրակի օրեր, առաւօտեան ժ. 10 մինչեւ 12։ Իզմայլովսկայա փողոց, տ. № 16։ 2—3

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ՄՈՒՐՃ
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ
№ 11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՂԱԼԱԹԻՈՅ «ՐԷՍՎԴԸ», պատմուածք, Լ. Բաշալեանի, 2. ՋԱՑՆՍ ՀՆՁՈՒՄ Է..., բան. Ա. Իսահակեանի 3. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅԵՐԸ, Իրանցու, 4. ՑԻՄԱՐԸ, նովելլա Ռանդոլպ-Լիխֆիլդի, թարգմ. Բ. Ի., 5. ԱՂՕՐՔ, բան. Լերմոնտովի, թարգմ. Ալ. Ծատուրեանի 6. ՏԻԵԶԵՐՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, Էրնստ Հեկկէլի, թարգմ. Ս. Տ.-Գասպարեանի, 7. ԴԻՒՂԱՑՈՒ «ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ» պատմուածք Սս. Տեր-Աւետիքեանցի 8. ՎԱՂԱՀԱՍ ԵՒ ՈՒՇԱՀԱՍ ՀԱՆՁԱՐՆԵՐ, Զ. Լոմբրոզօի, 9. ՋԷՅԹՈՒՆԸ XIX-ՐԴ ԴԱՐՈՒՄ, Հ. 10. ԵԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ X ԿՕՆԴՐԷՍԸ, Հ. Առաքելեանի, 11. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ, Ստեփան Ըսկան, Լեօի, 12. ԼԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ, պօէմա, Վահան Միրաքեանի, 13. ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դօդէի, թարգմ. Տ. Ց., 14. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ, Լեօի, 15. ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԸ, բան. Ն. Դանչենկօյի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի, 16. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—49) Ա. Վիկէի՝ „Քերթուածներ“, Վ. Ն.—50) Վ. Թէքէեան՝ „Հոգեր“, Լ. Ս.—51) „Գիրք Թվոց“, Սս. Մ., 17. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Անասնապահութիւնը և կաթնատնտեսութիւնը մեր և ուրիշ երկրներում, Գլ. Ա. Կովկասի աշխարհագրական դիրքը.—Հողի բաժանումները Կովկասի զանազան շրջաններում.—Անասունների քանակութիւնը և նրանց տեսակները.—Համեմատութիւն Ռուսաստանի և Եւրոպայի հետ.—Նկատուած տարբերութիւնների պատճառները.—Ինչ փոփոխութիւններ է կրում անասնապահութիւնը ժամանակի ընթացքում, Ս. Զաւարեանի 18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասի կառավարչապետի շրջաբերականը Կովկասի նահանգապետներին. 19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիան գոհացած սուլթանից.—„Մեզ էլ, մեզ էլ“.—Անգլիական զրահակիրներ Պարսից ծոցում.—Աֆղանիստանի նոր էմիրը.—Լի-Խուն-Զանգի մահը.—Ինչ վերանորոգումներ աւելի մօտ են չինացիների սրտին.—Պաշարման դրութիւն Կապի գաղութում.—Սին գրող Օլիվա Երէյների բանտարկութիւնը.—Վհատութիւն և կեղծ ամօթ.—Մի օրինակ ազգայնական խաղաղ յարաբերութիւնների Աստրիայում, Լ. Ս. 20. † Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՑԱՆ. 21. ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ, Եր. Ֆրանգեան. 22. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ, 23. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ, 24. ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.։ 25. ՑԱՒԵԼՈՒԱԾ. «ՑԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլստոյի, թարգ. Տ. Ցովհաննիսեանի։

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը.

Մէլիք-Կարագեօզեան Գ., Գերմանիայի հայ ուսանողութիւնը, Թիֆլ. 1901 թ. գ. 20 կ.
» » Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկա-Հայաստանի համար, Թիֆլիս, 1901 թ. գ. 35 կ.
Մելեան Մեսրոպ քահ., Ընթերցողների ուշադրութեանը, Բաթում, 1901 թ. գ. 10 կ.
Բենիկ վարդապետ Քարոզչական թռթռվանքներ, Թիֆլիս, 1901 թ. գ. 25 կ.
Ֆարրարի քարոզներ, Թարգմանութիւն Սեդրակ Մանդինեանի, Վաղարշ. 1901 թ. գ. 1 ր.
Գոչեանց Գերճ, Զունօն, վիպակ, Թիֆլիս, 1901 թ. գ. 1 ր.
Բուդուղեան Ա. բժ., Կարիք եւ Բարեգործութիւն, Նոր.-Նախիջ., 1901 թ. գ. 15 կ.
Կուկլին Մ., Ոգնիներ, պատկերազարդ մանկական գրուածք, Թիֆլ. 1901 թ. գ. 8 կ.
Ցարութիւնեան Իս., 1) Կին վիպագիր Ե. Սպիրի, Թիֆլ. 1901 թ. գ. 15 կոպ., 2) Հայոց գիրը—1 ր. 50 կ., 3) Հաւառօտ տրամաբանութիւն—1 ր., 4) Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութիւնը եւ հայ ուսանողները—40 կ., 5) Ներսիսեան դպրոցի առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը—40 կ., 6) Նոյնը, երկրորդ ճանապարհորդութիւնը 20 կ., 7) Ստեփաննոս Պալասանեան—25 կ., 8) Աշակերտի յուշատետրը—30 կ., 9) Զգացմունքի աշխարհ (Վէրք Հայաստանի)—30 կ., 10) Սանահին—30 կ., 11) Իմ օրագիրը—25 կ., 12) Ծաղկոց (մանկական պարտէզ)—10 կ.
Նոյն հեղինակի թարգմանութիւնները.—1) Պետալոցցի, Լինհարդ եւ Գերտրուդ, վէպ—1 ր. 50 կ. 2) Հուքսլէյ (Գէքսլի), Տարերք բնական գիտութեանց—40 կ., 3) Դր. Նաուման, Էրզրում—15 կ., 4) Ե. Սպիրի, Վարդ Բեսլին—10 կ., 5) Ուռենց Ցովսէփ—15 կ., 6) Այծարած Մօնի—15 կ., 7) Ալպեան հովիւ 20 կ., 8) Հայրենազուրկ—50 կ. եւ 9) Եօկայի, Ուրացողը—20 կ.
Նոյն տեղը բաժանորդագրութիւն է ընդունվում տեղական եւ օտար քաղաքների լրագիրների համար, խմբագրական պայմաններով։
Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (չ.) 1—3

Ստացել ենք Մոսկվայի յայտնի առեւտրական տուն
Ա. եւ Ր. Բօյզենգվայգից
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ
Թէ ապրանքի յատկութեան եւ թէ գների էժանութեան կողմից՝ ոչ ոք չէ կարող մրցել։ Ցանկացողները կարող են անձամբ համոզվել։
Ընդունում ենք նաեւ ամեն տեսակ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ, արտասահմանի եւ Ռուսաստանի կտորեղէից (матерія)։ Դիմել՝
ԵՂԲ. Վ. եւ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ
Գոլովինսկի պրոսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ։ 10—10



Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Առաջարկում է թարմ կարամել մրգեղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։
Պատուէրներով դիմել գործարան. Գավլովսկայա փողոց, սեփական տուն, տելեֆոն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տելեֆոն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլոնիական խանութներում։
Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։
96—100

Дозволено Цензурою, Тифлисъ, 27 Ноября 1901 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванская ул.